ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/20

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Ղ. Բարիկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.01.2021թ.-ի թիվ 26/26/712-2021 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.01.2021թ. թիվ Ե/40/96-21 գրության հիման վրա, 21.01.2021թ.-ին «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.01.2021թ.-ին:

25.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/20 համարի ծածկագիրը:

03.02.2021թ.-ին, 10.02.2021թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 20.01.2021թ. թիվ Ե/40/96-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայության մատուցման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից 28.12.2020թ. ներկայացվել է հայտ: Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը: Համաձայն ՀՀ

կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և նույն օրը համակարգող քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով առկա անհամապատասխանության վերաբերյալ ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այն: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանության շտկում չի կատարվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.01.2021թ.-ի թիվ 26/26/712-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 11.02.2021թ.-ի թիվ ԱՀ-06 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ստացել ենք Ձեր կողմից 25.01.2021թ. ուղարկված էլեկտրոնային գրությունը՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, ծածկագիր՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20») գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ, ինչի հետ կապված ներկայացնում ենք մեր դիրքորոշումը:

«Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 2020թ. դեկտեմբերի 22-ին հրապարակված ««ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայության ձեռքբերում» գնանշման հարցման հայտերի

ներկայացման ժամկետը նախատեսված էր 2020թ.-ի դեկտեմբերի 29-ին: Հրավերում ներառված հավելված 6 պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ծառայությունները նախատեսված էր մատուցել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 18 ամսվա ընթացքում՝ 2021-2022թթ., ինչպես նաև վճարման ժամանակացույցի համաձայն մատուցված ծառայությունների դիմաց վճարումները նախատեսված էին իրականացնել 2021-2022թթ. ընթացքում:

Գնանշման հայտը նախապատրաստելու ընթացքում հրավերն ուսումնասիրելուն զուգահեռ մեր կողմից ուսումնասիրվել է նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ. և 2022թ. գնումների պլանը: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների պլանը հաստատվել էր 2020թ. դեկտեմբերի 14-ին (հրապարակված է www.gnumner.am կայքում), իսկ մինչ այժմ թվով երեք անգամ իրականացվել են փոփոխություններ, որոնք բոլորն էլ 2021 թվականի ընթացքում: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 14.12.2020թ. հաստատված 2021թ.-ի գնումների պլանում և նույնիսկ 2021թ.-ի ընթացքում մինչ այժմ փոփոխված գնումների պլաններում նախատեսված չէ ««ՀԱԷԿ» ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայություն» գնման առարկան: Բնականաբար 2022թ.-ի գնումների հաստատված և հրապարակված պլան ընդհանրապես չկա: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ.-ի գնումների պլանը հրապարակված չէ նաև www.armeps.am կայքի «գնումների պլաններ» բաժնում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետագայում՝ Օրենք) հոդված 15-ը սահմանում է, որ Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, …:

Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու … համար …:

Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» (հետագայում՝ Կարգ) սահմանում է, որ

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պարտադիրաբար սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ գնման առարկան ներառված չէ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ. գնումների պլանում և 2022թ. գնումների պլան չկա, հետևաբար 2021թ. և 2022թ. տվյալ գնման առարկայի համար նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, հետևաբար Կարգի համաձայն բացակայում է տվյալ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը և գնանշման հարցումը չէր կարող իրականացվել ի սկզբանե:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ. և 2022թ. գնումների պլանում տվյալ գնման առարկայի և դրա գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում գնանշման հարցումը առնվազն պետք է իրականացվեր Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, որի դեպքում հրավերի ապահովում չի պահանջվում:

Վերլուծելով ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջների և հրապարակված գնանաշման հարցման հրավերի պահանջների միջև առկա անհամապատասխանությունները, հիմք ընդունելով «ՀՀ Սահմանադրության» 5-րդ հոդվածով սահմանված իրավական նորմերի աստիճանակարգությունը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները, առաջնորդվելով ավելի բարձր աստիճանակարգություն ունեցող օրենքի և կարգի պահանջներով, համարելով, որ թեև հրավերում նախատեսված է հայտի ապահովման պահանջ, սակայն գնանշման հարցումը փաստացի իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովում:

Ի լրումն 01.02.2021թ. թիվ ԱՀ-06 գրության, 16.02.2021թ.-ի թիվ ԱՀ-09 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, ծածկագիր՝ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20») գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ, ներկայացնում ենք լրացուցիչ հիմնավորումներ:

«Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն փակ բաժնետիրական ընկերություն է, որի բաժնետոմսերը 100 տոկոսով պատկանում են ՀՀ կառավարությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետի ը. կետի համաձայն՝ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունները հանդիսանում են պատվիրատու և ըստ այդմ գնումներն իրականացնում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և գնումների ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 327-րդ հոդվածի համաձայն ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը և 328-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին, իսկ 330-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է

կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1)-ին կետի իգ) ենթակետի, ինչպես նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 29.05.2012թ. հաստատված կանոնադրության 13.4.1 կետի իա) ենթակետի համաձայն՝ խորհրդի բացառիկ իրավասությունն է հանդիսանում ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը (http://armeniannpp.am/page_files/documents/tnorenneri%20xorhurd/kanonadrutyun%20popoxutyunnerov.PDF):

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգի» 4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Մեր 01.02.2021թ. N ԱՀ-06 գրությամբ նշված և վերոգրյալ իրավական հիմքերը համադրելով կարող ենք եզրակացնել, որ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տարեկան ծախսերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները պետք է նախատեսված լինեն ամենամյա ծախսերի նախահաշվում, որը հաստատվում է խորհրդի որոշմամբ: Մինչև ամենամյա տարեկան ծախսերի նախահաշվի հաստատումը՝ ֆինանսական միջոցներ նախատեսելը, բոլոր գնումները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պետք է իրականացներ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2020թ. գնումների պլանի՝ այդ թվում նաև դրանում արված փոփոխությունների, գործողության ժամկետը լրացել է 2020թ. դեկտեմբերի 30-ին՝ վերջին աշխատանքային օրվա ավարտին: Այդ պահից սկսված 2020թ. գնումների պլանը չի գործում: 2020թ. գնումների պլանի գործողության ժամկետի ավարտով վերանում է տվյալ գնման պահանջը և գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը: 2021-2022թթ.-ի համար գնման գործընթաց նախաձեռնելու նպատակով գնման առարկան գումարով կամ առանց գումար պետք է ներառված լիներ 2021-2022թթ. գնման պլանում, քանի որ գնումների պլանը կազմվում, հաստատվում և հրապարակվում է յուրաքանչյուր տարվա համար և մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը:

Գնման առարկան գնումների 2021-2022թթ. պլաններում պետք է նախատեսեր առանց գումարի և գնանշման հարցումն իրականացներ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն: Խորհրդի կողմից ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումից հետո յուրաքանչյուր տարի գումարը պետք է ավելացներ գնման առարկայի դիմաց՝ փոփոխություն իրականացնելով 2021-2022թթ. գնումների պլաններում:

Հաշվի առնելով, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն իրականացրել է գնանշման հարցում չունենալով 2021-2022թթ. գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմք, խնդրում ենք գնանշման հարցման գործընթացը համարել չեղյալ և առաջարկել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին իրականացնել նոր գնանշման հարցում՝ պահպանելով Օրենքի և Կարգի պահանջները::

Ինչպես նաև, հաշվի առնելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է առանց իրավական հիմքի՝ գնման առարկան ներառված չէ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2021թ. գնումների պլանում և չկա 2022թ. գնումների հաստատված և հրապարակված պլան, խնդրում ենք «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի նկատմամբ չկիրառել պատասխանատվության միջոցներ:»:

4. <u>ՍՑ-LO-2021/20 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն:

iii. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնման

ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 11.01.2021թ.-ից-13.01.2021թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված հայտում բացակայել է թիվ 3 հավելված՝ հայտի ապահովումը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.01.2021թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի՝ magistral.nakhagits@yahoo.com հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում:

vii. Հանձնաժողովը, 13.01.2021թ.-ին շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության դրույթները, ինչպես նաև սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի հետևանքով, ղեկավարվելով նույն կարգի 42-րդ կետով, որոշում է կայացվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.01.2021թ.-ի թիվ 26/26/712-2021 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ

փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2021թ.-ից-13.01.2021թ.-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված հայտում բացակայել է թիվ 3 հավելված՝ հայտի ապահովումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

քարտուղարի կողմից 11.01.2021թ.-ին Մասնակցի էլեկտրոնային փոստի՝ magistral.nakhagits@yahoo.com հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին ծանուցում: Հանձնաժողովը, 13.01.2021թ.-ին շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության դրույթները, ինչպես նաև սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի հետևանքով որոշում է կայացվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել անբավարար և մերժվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է

Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 01.02.2021թ.-ին ներկայացված թիվ ԱՀ-06 և 16.02.2021թ.-ին ներկայացված թիվ ԱՀ-09 գրություններին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է … «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի

հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև

միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2-րդ էներգաբլոկի խողովակաշարերի և սարքավորումների սխեմաների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.12.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-54/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ վերոնշյալ ծառայությունների մատուցման համար որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 71331500:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.12.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 71331500, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ԳՀ, միավորի գինը և ընդհանուր գումարը՝ 32 953 100 ՀՀ դրամ:

www.gnumner.am կայքում 17.08.2020թ.-ի հրապարակված թիվ 24 գնումների պլանի փոփոխության և հաջորդող փոփոխությունների համաձայն՝ 3.127-րդ տողով որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 71331500, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ԳՀ, գումարը՝ 32 953 100 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից Մրցույթը կազմակերպվել է իրավական հիմքի առկայության պայմաններում: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված է, գնման առարկան ներառված է գնումների պլանում: Ինչպես նաև www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.12.2020թ.-ին կատարված 2020 թվականի գնումների պլանի փոփոխության համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար որպես ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 71331500, քանակը՝ 1, գնման ընթացակարգի տեսակ՝ ԳՀ, միավորի գինը և ընդհանուր գումարը՝ 32 953 100 ՀՀ դրամ:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների

պահպանմամբ և նույն հրավերով Պատվիրատուի կողմից հայտի ապահովման պահանջ ներկայացնելը իրավաչափ է և չի հակասում վերոհիշյալ իրավական նորմերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.01.2021թ.-ի թիվ 26/26/712-2021 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/20 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**